Ե. ՏԱՐԻ — ՁՈՐԵՔՇԱԲԹԻ 1 ՅՈՒՆՎԱՐ 1903 — Թիւ 481

ՇԱՐԺՈՒՄ

ԻՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ հաւար
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի հաւար տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի հաւար
Տարեկան 3 տլր.
Վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին հաւար 40 սանթիմ վերջին երեսի հաւար 20 սանթիմ է. երեքին աւելի անգամներու հաւար 20 0/0 զեղչ կըլլայ։

Վառնայի հաւար ձեւոքի 10 սանթիմ

Նամակ եւ [illegible] խմբագրութ[illegible] [illegible]ցին.

Pe[illegible] [illegible]ЕСТНИКЪ „[illegible]ЖУМЪ“ [illegible] Варна

[illegible]action du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արտասահմանի հաւար ձեւոքի
)(20 ՍԱՆԹԻՄ)(
Պուլկարիոյ հաւար ձեւոքի
)(15 ՍԱՆԹԻՄ)(

Գրութիւնք չեն տրուիր

R. P. Kalémcarian, Mechitharistengasse (Autriche) Vienne

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՍԻ ՏԱՐԻ ԵՒՍ

Մի տարի եւս անցաւ. և մենք դեռ սարսուկ ենք։ Անցեալ տարին չիրականացրեց մեր յոյսերը. կարող է պատահել որ 1903ն էլ չիրականացնի, որովհետեւ ժողովրդների ազատութիւնը մի, երկու կամ տաս տարիներում չի ձեռք բերվում, մանաւանդ եթէ ժողովուրդը որոշ բարեմասնութիւններից զուրկ է։

Ժողովրդների մէջ, ինչպէս և անհատների, սովորութիւն է դարձել ամեն մի նոր տարի ուրախութեամբ դիմաւորել, որովհետեւ թէ անհատական և թէ հանրային չիրագործված յոյսերի իրագործումը հաւատալով մտածվում է—եթէ յոյսերը այսօր չիրականացան, վաղը կամ միւս օրը անպատճառ կիրականանան, մանաւանդ եթէ ջանք չի խնայվում այդ յոյսերը իրականացնելու համար։

Դիմաւորենք և մենք ուրախութեամբ և յոյսերով այս նոր տարին. դիմաւորենք հաստատուն հաւատքով որ մեր ազգային յոյսերը անպատճառ պէտք է իրականանան։ միայն այն պայմանով որ լոկ յոյսերով, երազի պէս թմրած չը նստենք. այլ բազմապատկենք մեր եռանդը, մեր ջանքը. մեր ամբողջ ուշը կեդրոնացնենք մեր փերկութեան գործի, յեղափոխութեան վրա և մեր ազատութիւնը ձեռք բերելու համար ամեն զոհողութեան պատրաստ լինենք։

* * *

Դեռ երեկ անցաւ մեր յեղափոխութեան առաջին տասնեակ տարին. այդ տաս տարվան շրջանում մենք 60000 մարդ զոհեցինք, և ահագին նիւթական կորուստ ունեցանք. բայց մեր զոհերը փրկութեան գիտակից զոհեր չէին. նրանք ոչխարի պէս մեռան, առանց իմանց կեանքը, ինչքը և պատիւը պաշտպանելու մի փոքր ճիգի։ Ու այդ բազմաթիւ զոհերով փոխանակ մարդկութեան յարգանքը և աջակցութիւնը գրաւելու, մենք միայն արհամարական ժպիտի և մուրացկաններին բաժին սանտիմների արժանացանք։ Որովհետեւ քաղաքակիրթ, մըշակված մարդկութիւնը անկարող էր երեւակայել որ մարդը կարող է ոչխարի նման զոհվել։

Մեր տասնեակ հազարներով մարթվողները իրենց ոչխարային ալեկոծուր մայոցով աշխարհին յայտարարեցին—հայը գնահատել չգիտէ ոչ կեանքը, ոչ պատիւը, ոչ ինչքը և ոչ հայրենիքը։ Ու մարդկութիւնը զզվեց մեզնից, և խղճաց այնքան, որքան կարող էր խղճալ մսագործի դանակի տակ թրջրտացող ոչխարին։ Եւ մենք դեռ վիրաւորվում ենք. դեռ գանգատվում ենք որ այսինչ կամ այնինչ պետութիւնը կամ ժողովուրդը մեզ չօգնեց։ Եթէ մեր մի բուռն հերոսներն էլ չը լինէին, գուցէ մենք մարդկութեան աչքում ամենաղզուելի ժողովուրդը հանդիսանայինք։

Տասը տարվան փորձերից յետոյ, դեռ այսօր էլ մենք չենք ըմբռնում այն միջոցի անհրաժեշտութիւնը և կարեւորութիւնը, որը կարող է փրկել մեզ վերջնական կորստից։

Դեռ յեղափոխութիւնը խենթութիւն և աւազակութիւն անուանողներ կան. դեռ եկ ղեցի չինելը և աղքատներին կերակրելը աղգասիրական առաջնակարգ բարեմասնութիւն է համարվում։ Սխալ համոզում. մի քանի տարի եւս առանց աղատութեան—ոչ մեր փառասէր եկեղեցիները զոյութիւն կունենան, ոչ մեր օրբանոցները, ոչ մեր դպրոցները, ոչ մեր կամուղիկոսները և ոչ մեր պատրիարքները։

Հայը տաճկաստանում կը ջնջվի. այդ է պահանջում Թուրքիոյ շահը. հայը Կովկասում կը ռուսանայ, այդ է պահանջում ռուսի շահը։

Այս ուրախութեամբ դիմաւորենք մենք նոր տարին, բայց միայն այն որոշումով որ մեր բոլոր ճիգերը թափենք մեր յեղափոխութիւնը ուժովցնելու, մեր ժողովուրդը չինելու համար։ Դրքի, խաչի, խունկի և մոմի տեղ ղէնք և վառօդ գնելու որոշումը տանք ամբողջ ազգով, եթէ մեզ փափագելի է երբ և իցէ հային տեսնել ազատ կրծքով ազատակոչ՝ շնորհաւոր նորտարի և բարի կաղանդ։

ՎԱՐԴՕ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ՊԱՏՈՒՆԵԻ ԹՈՒՄԱԵԱՆԻՆ

Պատուելի,

Վերջերս այս սիւնակներուն մէջ ձեր հաղուագիւտ սեռէն մէկ անդամին քանի մը խօսք ուղղելու առիթը ունեցայ։ Անշուշտ ծամածռումով կարդացիք այդ տողերը, որոնք ներքողէն ըլալէ հեռի էին՝ ձեր միաբանութեան այդ զուարճալի ներկայացուցիչին համար։

Որքան որ ալ իմ վրաս փութկոտութիւն մը կը տեսնէք զբաղելու պատուելիական ձանձրանալի տիպարներով, հաւատացէք սակայն որ կեանքիս ամէնէն անախորժ եւ տաղտկալի վայրկեանները կ'ապրիմ երբոր իրեւ հրապարակագիր ինքզինքս ստիպուած կը զգամ քանի մը խօսք ուղղելու այնպիսի արարածներու որպիսին էք դուք։

Այս պահուս այժմէութեան մարդն ըլլալու տխուր փառքին տիրացած էք։ յուզարկաւորութեան այն թափորին առթիւ. զոր ձեր Լոնտոնի խանութէն յաջողեր էք կազմել տալ Հայաստանի ալեւելեան սահմաններուն վրայ։ եւ զայն ճամբայ հանել տրուեր էք գէպի ձեր կեդրոնը։ Ցիւրեխէն մեզ ղրկուած թղթակցութիւն մը անցեալ օր կը պատմէր այդ յուզարկաւորութեան թափորին առաջին ցուցադրութիւնը սոյն քաղաքին մէջ։ Մեզ անծանօթ է շահը, զոր հէք անտէրունջ որբերու այդ ներկայացումը բերաւ ձեր քսակին. ատոր մասին չիմ ուզեր շիտակը խօսիլ։ Հարակնութեան կասկածը չներշնչելու համար ձեզի։

Կը յիշէ՞ք, պատուելի, անցեալները բարիգեան թերթերը օրուան պէտքի հարց մը յուզեցին. եթէ չէք յիշեր, գուցէ զայն կարդացած ըլլալով ձեր սադայէլական զբաղումներուն յոգնավաստակ ճնշումին տակ, ես պատմեմ ձեզ համառօտակի։

Կարգ մը անիծեալ սրիկաներ,—որոնց նմանելէ շատ հեռի էք անյուշտ,—ժամանակէ մը իվեր Ֆրանսացի մատաղ ու անփորձ աղջիկներ զանազան պատրուակներու տակ հրապուրելով կառնեն հեռաւոր երկիրներ կը տանին եղեր՝ անոնց մարմինը վատ ու անարգ շահագործութեան մը առարկայ դարձնելու համար։ Գործը երթալով այնքան ընդլայնուեր է, անոր հետաքրքրողները այնքան շատցեր են, զայն գործադրութեան դնելու համար միջոցներու անանկ սինլքոր եւ նոզկալի անխտրականութիւն մը սկսուեր է յանձն առնուիլ որ ա՛լ գործը յայտնուեր, դուրս պոռթկացեր է։ Սպիտակամորթներու գերավաճառ տիտղոսին տակ, Բարիզի թերթերը ահագին աղմուկ բրցուցին, մինչեւ որ վերջապէս կառավարութիւնը բռնեց դարձեալ այդ գերեվաճառները եւ ամէնախիստ պատիժներու ենթարկեց զանոնք։ Այս առթիւ սրտաճմլիկ, քստմնեցուցիչ մանրամասնութիւններ երեւան ելան այդ պժգալի տուրեւառին գործադրութեանը մէջ. ի՛նչ կործանուած ընտանեկան յարկեր, ի՛նչ անգիտակից կուսութիւններ անգթօրէն եղծուած, միամտութիւններ շահագործուած, ի՛նչեր եւ ի՛նչեր։ Հոս մանրամասնութիւններ յիշելը ձեզ հաւատելու համար՝ աւելորդ բան է. որքան որ դիւրութեամբ կը հաւատաք Աստուծոյ խօսքին ամէն առեն, այնքան ալ իմ խօսքիս, այս պարագային մէջ, կը խնդրեմ որ հաւատաք։

Եւ ճերմակ գերեվաճառներու այս գործը յիշելուս մէջ ունեցած թագուն մտածումս հարկաւ կռահեցիք։

Անոնց ու ձեր միջեւ նմանութեան բազմաթիւ, յոգնախուռն կէտեր աչքիս կը զարնեն, շատ կարեւոր տարբերութեամբ մը, որուն պատասխանատուն դուք չէք սպահովապէս։ Այդ տարբերութիւնը սա է որ այս ընթացքով դուք պիտի կրնաք յաջողիլ ձեր ձեռնարկած որբախնամ շահագործումը անարգել առաջ տանիլ երկար տարի, օգտուելով մեր ազգային կացութեան հաւանական երկարաձգումէն և մանաւանդ այն շատ պատրող երեւոյթներէն որոնք ձեր ձեռնարկին ճիւաղային ներքինը կը ծածկեն և արտաքինը փայլուն ջնարակով մը կ'օծեն։ Այս պատճառաւ իսկ

անպատիժ պիտի մնաք. և չպիտի պատնուի ոստիկանութիւն մը որ ձեր օձիքէն բռնելով ձեր բացած խանութէն դուրս քաշէ զձեզ. թպիրէ ձեր պատուելիի ծեմածուռ գլխակը, ձեր գործած լուռ անչշուկ ոճրին գրուագները պարզէ ձեր աչքեր ու դրակոն պատժով մը պատուհասէ զձեզ: Այս բանը երբէք չպիտի պատահի, մի՛ վախնաք:

Եւ յետոյ սխալ է ձեր հասատութեան արուած որբանոց անունը. ձերը որբավաճառանոց մըն է պարզապէս. Բաւոր յաջող չէ. բայց ճիշտ է. Իսկ գուք ալ որբասէր մը չէք, այլ որբավաճառ մը իսկապէս. կամ, եթէ աւելի ճիշտը կուզէք, փոքր, սիրուն, գործը գիտցող Պարնըմիկ մը. Պարնըմը գիտէք անշուշտ. ամէն պատուելի քիչ շատ ճանչցած և ուսումնասիրած ըլլալու է այդ անզուգական տիպարը. ձեր մեծ անհերքելի վարպետը: Անոր աշակերտը, թէեւ ձեր ձեռնարկութեանց ծաւալովն ու յանդգնութեամբը անոր չէք հասնիր, բայց անպատուութիւն ալ չէք բերեր անոր: Ա՛ս մխիթարութիւնը ձեր վարձքը թող ըլլայ ձեր այդ աւերարար ասպարէզին մէջ:

* * *

Բայց, կատակը մէկ կողմ. աղնիւ պատուելի, արդեօք կարելի չէ՞ որ վերջապէս պայմանաժամ մը ցոյց տաք ձեր նուաստ և ողկալի շահագործութեանց համար, բոլորովին անհնա՞ր է,— անգամ մը որ ձեր զգիր խաղը իր ամբողջ գեհենիկ խաղքութեամբը երեւան ելաւ,— բայց երբայ յայտնել մեզ թէ որքերու դեռ քանի՞ թափոր պիտի ձգէք ձեր խեղճատակ որջը: Դուք և ձեր մէկ քանի պաշտօնակիցները միաւորեալ դրած էք պատուելիութիւնը,— որ ինչ ալ ըլլայ բառական այնքան զգեղնակութիւն մը չունի,— անպատուութեան, վատութեան, անարգութեան հոմանի՞շ դայ ձնել, եթէ արդէն մինչեւ հիմակ չէք դարձուցած:

Անգամ մը որ շահագործութեան այդ գիւրին մեթոդը ընտրած էք ձեր սպասուելիափայլ փորը պարարացնելու համար, ձգեցէք հայկական արիւններու սա փոքրիկ սրտաշարժ մնացորդները, և ցուցադրութեան համար տարբեր ասպրկաններու գիմացէք. օրինակի համար կապիկներու և զանազան անասակ վայրի գազաններու, որոնց հազուագիւտ և չնաչխարհիկ նմուշները չէ որ կը պակսին, գացէք գտէք զանոնք Ափրիկէի խորերէն, և քաղաքակիրթ աշխարհները բերէք, ասնավաճառէ ասնավաճառ, դնդէ կեղ պարացուցէք, ասով թէ՛ կեանքը աւելի զուարճալի կըլլայ և թէ մանաւանդ գործը աւելի շահաբեր;

Գազանազարդ եղէք փոխանակ որբանոցամ ըլլալու, և ամէնէն դէՀը որբանոցամներուն, Պարնըմի կեանքն ու գործը լրջօրէն ուսումնասիրեցէք, և փորձով պիտի տեսնէք թէ ապարդիւն և վնասակար խորհուրդ մը չէ որ կուտամ ձեզ. ընդհակառակը:

Շաւարշ

ԿԱՂԱՆԴԻ ԳԻՇԵՐԸ

Հին տարու վերջին ժամերը սահելու վրայ են. Ռուսերոյ հին մայրաքաղաքը, Մոսկուան, չը նայելով անտանելի, 30 աստիճան ցրտին անհրաժեշտելի կենդանութիւն է ցոյց տալիս: Հոյակապ պողոտաները պճնազարդված են ու լոյսի մէջ թաղված, թէեւ նեղ բայց չքեղ փողոցներուն մտեղ ձգելու տեղ չը կայ. մարդիկ, կառքեր անցնում են մեծ տրտորանքով, խմբերով:

Հարուստ եւ ապրատ շատապում են իրենց տները բեռնաւորված նոր տարին դիմաւորելու պատրաստութիւններով: Կան այնպիսիներ ու որոնք տուն չեն գնում, այլ միայն թափառում են նոր տարին փողոցում դիմաւորելու որոշումով. տուն չեն գնում, որովհետեւ իրենց տեղում ոչ միայն խորտիկներ ու միրգ չը կայ, այլեւ լոյս, լոյս չը կայ:

Ամրոցի քաղաքը կարծես հրդեհուած լինի, փողոցներում տեղ տեղ հսկայական խարոյկներ կան. այդ խարոյկները հանդիսաւորութեան համար չեն, այլ կառապաններին, փողոցի հերթապահ ոստիկաններին տաք ցնելու համար: Այդ խարոյկների վրա տաքանում են եւ այն անցորդները, որոնց մարմինները չեն վայելում տաք մուշտակների պաշտպանութիւնը:

Ահա մի խարոյկի մօտ կանգնել են ցնցոտիների մէջ փաթաթված երկու ռուս պառաւներ. երեւում է որ դրանք գաղթականներ են, մշտական սոված ռուս գաւառներից: Ինչպէս են տաքանում, Աստուած իմ, կարծես ուզում են խարոյկի մէջ մտնել: Բաւական չէ որ ձեռքերը տարածել են բոցավառ խարոյկի վրա, այլ եւ բերանները լայն բացած ներս են շնչում խարոյկի արձակած ջերմութիւնը, իրենց սառած փտացած ներսին ջերմութիւն, կեանք տալու համար:

Պառաւները կենդանութիւն ստացան. նրանք սկսեցին իրարու հետ խօսել, յանկարծ վրա հասաւ մի ոստիկան, երեսը, ականջները դէմ ուեց կրակին, ու իսկոյն եւ քաշվելով նկատեց գաղթական պառաւներին.

—Ի՞նչ էք կանգնել այս տեղ, թափառաշրջիկներ:

—Ոչինչ, տաքանում ենք, պատասխանեց պառաւներից տարեցը. տաքանալուց յետոյ պէտք է գնանք:

—Ո՞ւր պէտք է գնաք. Տեղացի՞ էք. անցագիր ունի՞ք. շարունակեց ոստիկանը:

Պառաւները լռեցին. մի քիչ շըփոթած աչքները կախեցին խարոյկի վրա ու չարունակեցին տաքանալ:

—Ինչ է՞ք լռում անպիտաններ, ձեզ հետ եմ. անցագիր ունի՞ք. աւելի խստութեամբ շարունակեց ոստիկանը:

—Ինչ էք ուզում մեզնից, մենք գաղթականներ ենք. տաքանում ենք. մարդի մէջ չենք տալիս, հիմա պէտք է գնանք, աղաչական ձայնով պատասխանեց նոյն պառաւին:

Մինչ ոստիկանի եւ գաղթական պառաւու միջեւ այդ խօսակցութիւնն էր տեղի ունենում, խարոյկին մօտեցել էին եւ մի քանի բարեկեցիկ քաղաքացիներ: Այդ քաղաքացիներից մէկը դառնալով ոստիկանին ասաց.

—Ի՞նչ է ուզում այդ խեղճերից, ի՞նչ անցագիր էք պահանջում այդ երեխաներից: Եթէ չունենան, ի՞նչ պէտք է անէք: Դրանք այս գիշեր ինձ մօտ են լինելու. ես անցագիր ունեմ... Մոսկուացի եմ. վաղը ինձնից կը պահանջէք դրանց, համոզեցէք. ահա իմ այցեքարտը:

Ոստիկանը մի վայրկեան չուարեց, եւ վերջը պատասխանեց մեղմօրէն.

—Ներեցէք պարոն, մեր պարտականութիւնն է. կասկածելի մարդիկ են երեւում, եւ պէտք է ստուգուրվենք: Իսկ եթէ դուք պաշտպան եւ երաշխաւոր էք կանգնում, դրա դէմ ոչինչ չունեմ:

Փաղաքաքին աղ եւս ուշք չը դարձնելով ոստիկանի վրա, դիմեց պառաւներին:

—Դէ, տղերք գնանք, շուտ շուտ, սահնակով կը տանէի ձեզ, բայց աւելի կը մրսէք. տարագ քայլելով չէք տաքնի:

* * *

Գեղեցիկ ու պարզ դիշեր է. լուսինը մեղմօրէն լողում է հայկական ջինջ երկնքի տակ: Այն երկնքի որը ականատես է եղել ահռելի ոճրագործութիւնների և դէպի որը՝ ուղղվել են հայ արեան թանձր գոլորշիները: Բայց այդ կարմիր ու թանձր գոլորշիների հետքը անգամ չէ երեւում Հայաստանի երկնքում: Մասիսը վեհօրէն, ճերմակ սաւանը գլխին ու կրծքին քաշած դուրս պրծնելով արարատեան սարահարակի կրծքից, մխսվել է երկնքի մէջ կարծես պատեղ ուզելով այն երկինքը որ այնքան անտարբեր է դէպի հայկական թշառութիւնը:

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՏԱՌԱՊԱՆՔԸ ԵՒ ԵՒՐՈՊԱՅԻ ՊԱՐՏՔԸ

(Բանախօսութիւն է. Պէռնեբայցի)

Բ. 9

Մարտ 3ին, գերման խորհրդարանին մէջ, մեր ընկերը Կ. Կրատնաուէր այս իմաստով խօսք առաւ հայոց կացութեան վրայ յոյժ հրահանգիչ եւ յոյժ չափաւոր ճառով մը. անիկա պահանջեց կայսերական կառավարութենէն գործադրել տալ 1878ի Պերլինի դաշնագիրը, եւ ա՛լ աւելի երկար ատեն անտարբեր չգտնուիլ Թուրքիոյ բռնաբարութեանց հանդէպ: Կարգ մը հայեցակէտներով Կրատնաուէր բաւական խոհեմ չգտնուեցաւ: Իր ճառին խառնեց Գերմանիոյ արտաքին քաղաքականութեան ուրիշ հարցեր: Վերջապէս ան Պիւլով կոմս ճիշդ տիպը գտատալու այն դիւրին պատասխանը թէ Գերմանիա չէր կրնար ամէն գոհներու մէջ Հանս Տանգի(*) դերը խաղալ:

(*) Հենգի պէս ամէն բանի խառնուող անձ:

Բայց մենք համամիտ ենք այս կէտին վրայ. մենք կը փափագինք որ գերման կառավարութիւնը չերթայ ամէն գոհիներու մէջ Հանս Տանգի դերը խաղալ, չենք պահանջեր որ ուրիշ երկիրներու ամէն ինդիրներուն մէջ երեւնայ: Զեյրիքի պիկինեան օր—լաւ իմացուած ողորմասիրութիւնը նախ ինքիրմէ կսկսի, բարի օրինակը այսօր բրոբականայի լուսագոյն մէջոցն է զոր մենք ճանչնանք:

Բայց հայերու պարագային մէջ. կայ դաշնագիր մը որ գործադրուելու է, եւ տը Պիւլով կոմս աղէկ գիտէ թէ անոնք ինչպիսի՞ պաշտպանելու անհնայութեան մէջ կը գտնուին եւ թէ օգնութիւնը դրսէն գալու է իրենց:

Իր մերժումին ճշմարիտ պատճառը բոլորովին տարբեր է: Գերմանիա սոյսպահաս կարգ մը շահեր ունի խնայելու Փոքր Ասիոյ մէջ եւ իր վարիչները շատ օգտակար կը դատեն սերտ բարեկամութիւն պահել Սուլթանին հետ:

Այս շահերը ծանօթ են ձեզի, խնդիրը Անատոլուի երկաթուղիին եւ Պաղատի երկաթուղիին վրայ է: Իրրեւ ընդհանրական, մենք սկզբունքով ո եւ է առարկութիւն չունինք այդ երկաթուղիներուն շինութեանը Գերմանիոյ ձեռքով: Եթէ գերման դրամագլուխն ու աշխատութիւնը երկաթեայ գծեր կը շինեն Փոքր Ասիոյ մէջ, յոյժ հաւանարար ատիկա օգտաւէտ պիտի ըլլայ տպագային անոնց մօտերը գտնուող ժողովրդոց:

Բայց հայ ժողովուրդը այժմ այդ ձեռնարկներուն կապուած շահերուն դրաւի գումարը ըլլալո՞ւ է. ընդհակառակը, Հայաստանի բարօրութիւնը պէտք չէ՞ որ նկատողութեան առնուի. եթէ կուզենք որ առաջիկային այդ երկաթուղիները հաստատի աղբիւր մը ըլլան եւ գործօն առեւտուր մը բարգաւաճի անոնց երկայնութեանը վրայ: Անշուշտ, դիւաւոր գիծը չանցնիր Հայաստանի մէջտեղէն, բայց գոնէ չատ մօտիկ է անոր:

Ոչ պէտք չէ որ հայերը անաբեկուին որովհետեւ գերման դրամագլուխը այս պահուս շահեր ունի Փոքր Ասիոյ մէջ: Անոնց հանդէպ յանձնառութիւններ ունինք. պարտաւոր ենք բռնել զանոնք եւ վախը թէ Սուլթանը վրէժը երկաթուղիներէն կառնէ՝ չի կրնար այնքան մեծ ըլլալ ճիշդ այն բոպէին ուր տէրութիւնները կը թուին համաձայնիլ միաբան գործակցութեան մը համար ի նպաստ հայերուն. եւ Արեւելցին, ինչպէս բոի, կը խոնարհի ներքոյ հուժկու կամքի մը կը զգայ որուն վրայ բոնի ուժը կուգայ աւելնալ: Ուժը Եւրոպայի այս կողմէն է. եթէ Եւրոպան ուզի Սուլթանը տեղի պիտի տայ, եւ թող իսկական բարենորոգում մը իրականանայ Հայաստանի մէջ ու բոլոր Թուրքիոյ ժողովուրդները պիտի ազատագրուին, վասնզի չի կայ բարենորոգում անուանին ճշմարտապէս այժմեան բարենորոգում մը որ՝ կատարուելով Հայաստանի մէջ՝ Թուրքիոյ ամբողջ մնացեալ մասին վրայ չազդէ:

Դիտենք թէ Թուրքիոյ մէջ բարենորոգման կուսակից երիտասարդ Թուրքերու հզօր շարժում մը կայ, որոնք կը հասկնան թէ իրենց երկրին հիմակուան վիճակը չի կրնար երկարաձգուիլ. անոնք յոժարակամ պիտի ուզէին բարենորոգումներու գործադրութիւնը, բայց անոնց ձեռքերը կապուած են Թուրքիոյ այժմեան քաղաքական դրութենէն: Ուրեմն գործատոր դառուն եւ անոնց որ Եւրոպայի մէջ կը հետեւին ոսմկավարական գաղափարներու՝ կինայ խօսք առնել եւ պահանջել որ ամբողջ ժողովուրդի մը կեանքը չծախուի, չը զոհուի քանի մը դրամատէրներու

Արաքսի ափին, Ալաշկերտի ուղղութեամբ, մի մեծ բոցավառ խարոյկի չուրջը հանգստանում են տասնի չափ հայ գաղթականներ. նրանք բոլորն էլ լաւ վինված են. կրակի ու լուսնի շողքերի տակ փայլփլում են նրանց կենքերը։

Նրանք փախչում են Կովկասից, որովհետեւ չեն ուզում ռուսահպատակ լինել։

Երկու ժամից աւելի է որ նրանք հանգստանում են։

— Դէ, տիպարտիք, ասաց Նրանցից մէկը, ըստ երեւոյթին առաջնորդը։ Երթանք, չտապենք սահմանը անցնել։ Երթանք այդ անհիւրնկալ աշխարհն։ Մասիսը մեզի առաջնորդ։ Քանի մը ժամ՝ հին պարի մեռնելուն։ Երթանք նոր տարին մեր երկրին մէջ դիմաւորենք։ Եթէ բախտ ունինք թուրքի և քուրդի ալ չկը հանդիպինք։ անանց արիւնոտ իրարու կենաց կը խմենք, և մեր ցաւալի հարեւանին նոր տարի և նոր կեանք կը մաղթենք։

— Այո, միջամտեց Մշեցի Մխոն։ Երթանք։ ափսոս որ քիչուր ենք։ վախնալուս համար չէ որ կասեմ։ չատ ըլլայինք։ չատ թշնամի կսպանէինք և չատ արիւն կը խմէինք։ Երթանք թող հին տարին հոս վերջանայ։ իր գէշութիւններն ալ հոս մնան։ Երթանք սա նալաթ երկրէն։ թողունք գազանին երկիրը։ Հասկըցնենք որ թէև անօթի, թէև ծարաւ, բայց մեր երկրէն ձեռք չենք քաշեր։ Դէ եղլա։ Եա քեզի մեռնիմ Մշու Սուլթան Սուրբ Կարապետ։ ուժ տուր իմ ձեռքին։

— Երթանք, երթանք, աղաղակեցին միւս ընկերները։ Երթանք մեր վախանը։ ոչ մէկ տեղ մեզի կեանք փրկութիւն չկայ։ Եթէ ըլլայ մեր երկրին մէջ պիտի ըլլայ։

Կովկասի մայրաքաղաքի հայ հարուստներից մէկի պալատը լոյսի մէջ ողողում է։ այս տան մէջ էլ նոր տարին դիմաւորելու պատրաստութիւն են տեսնում։

Արեւելեան ու եւրոպական փարթամութեան մէջ ընկղմված սրահի մէջ տեղը դրված է մի զարդարուն սեղան. ճենճուկի կամը միայն պակաս է սեղանի վրա. հիւրերը երկոտաս, հատ, եղած ու ճարպոտ, պարապում են սեղանի չուրջը և ագահ ակնարկներ են նետում թանկագին խորտիկների ու խմիչքների վրա։ Բոլոր դէմքերը արտայայտում են ուտելու, խմելու, պռոնկանալու անզուսպ ցանկութիւն։

Ժամի տաս երկուսը մօտենում է. տանտէրը, մի ճարպոտ ու նեղլիկ աչքերով դրամատէր, իր մօտ կանգնած հասատանալու, իւղտելու տրամադրութիւնով և սղպանիրական փոքրիկ անցեալով փաստաբանի ռէֆինկոյի կոճակի հետ խաղալով ասում է.

— Ճիշդ է որ ժամմարովին յեղափոխականները, այդ աւազակներն են սպանել. կարծեմ մի ժամանակ դուք էլ այդ աւազակներից էիք։

— Ոչ, պարոն Շառլոտանով այսպէս է դրամատէրոջ մականունը. ես երբէք չեմ պատկանել Նրանց ու երբէք չեմ համակրել. ես ազգասէր եմ. և իմ ազգի հարուածներին շատ եմ սիրում, որովհետեւ Նրանք եկեղեցիներ են շինում. հայ մուրացիկներին ողորմութիւն են տալիս։

Ու այդ խօսակցութեան միջոցին սրահեղից որ է ներս է մտնում Շառլոտանովի հեռու ազգականներից մէկը, մի երիտասարդ ուսանող և մօտենալով իւրտոջ նախկին ազգասէր փաստաբանին.

— Որչափ ցած մարդ էք դուք, պարոն. չորս տարի առաջ, երբ ես գիմնազիստ էի. դուք իբր գուստ յեղափոխական մեր մէջ կազմակերպութիւններ էիք հիմնում։

Այսօր մրոտում էք ձեր այդ անցեալը, որի շնորհիւ միայն դուք յաջողեցիք մի քիչ ձեր փորը հաստացնել։

— Իսկ ձեզ քեռի զգուշացնում եմ յեղափոխականների հացէին այդպիսի խօսքեր մի ուղղէք. Նրանց ականջները շատ սուր են և ամեն մի անարգանք. որչափ որ գաղտնի էլ լինի, հասնում է Նրանց։

— Վա՜հ, ի՞նչ ես ասում. ասա՛ Զէկ, չէ՞ ոչինչ չասացի. չեմ ուզում Նրանց վրէժի առարկան դառնալ։ Փող էլ կտամ. փող. Աստուած վկայ. հաւատում եմ. Նրանք ամեն բան կանեն։

ՎԱՐԴՕ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Սոֆիա 27 դեկտ. 1902

Վերջին օրերս Սոֆիա՝ ուր գործելու կարելիութիւն ունեցող թարմ երիտասարդական ուժին քով կայ նաեւ անտարբերներու ահագին ապառաժ մը, որ չէ ցնցուած ոչ կոտորածներու ահեռալի դոյժէն և ոչ յեղափոխական յանդուգն և քաջարի քայլերու աւետումէն՝ տեղի ունեցաւ յոյժ ցաւալի և տխուր միջադէպ մը, որ կուգայ իրականացնելու այդ շատ իրաւացի մտածումը, զոր ունեցան ամէն անոնք որոնք Հնչակեան կուսակցութեան վերջերս կրած փոփոխութիւններուն և պառակտումներուն ուշի ուշով հետեւեցան։

Այդ միջադէպը անտկնկալի կարգը երբէք չէ կարելի դրուիլ, որովհետեւ այն կեղծաւորները՝ որոնք միութիւնը սատղծեցին, ուրիշ նպատակ չունէին բայց միայն միութեան նուիրական գաղափարին շուրջը զանազան հինցած խաղեր սարքելով Դաշնակցութիւնը ծուղակը ձգել և միամիտ ժողովուրդը մոլորեցնելով ապրուկի նման ծծել անոր նիւթական կարողութիւնը, որ, դժբախտաբար դարձեալ այնպիսիներուն կոկորդին յագեցումտալու կը յատկացուէր։

Ամանկ կեղծ և անմիտաբան տարրերէ կազմուած միութիւնմը հետեւանքները միշտ ապետաւոր կըլլան, որոնք, ցաւալի է որ, վերջերս թնդանօթի ռումբերուն նման իրարու յաջորդելով կը պայթին ժողովրդին գլխին վրայ, զանի վերջնական կերպով ընկճելու, վհատեցնելու և ջախջախելու դիտումով, մանաւանդ այս վայրկեանին, երբ գերմարդկային ճիգեր կը թափուին ամբողջ աշխարհը յեղափոխութեան փրկաւէտ գաղափարին փարել տալու։ Միթէ ոճիր չէ՞ ասիկա ազգին դէմ մեր միութենական, անկեղծ (?) և ազգասէր(!) պարոններուն կողմէ։

Ցակաւին անցեալ օր մեր Սոֆիացիներուս գլխին ալ պայթեցաւ նմանօրինակ ռումբ մը, որ արեգակին չլացուցիչ բայց պայծառ ճառագայթներու նման ցոյց տուաւ տեղւոյս գաղութին գիտակից մասին թէ՝ Հնչակեան կուսակցութիւնը ինչ խղճալի վիճակի մէջ կը գտնուի և անկումի ո՞ր աստիճան տխուր շրջան մը բոլորելու վրայ է։

Բացատրեմ ըսածս.

Համբաւաւոր պատուելի Զիթճիեանը, որ իբրեւ թէ յեղափոխականի դեր կը խաղայ, բայց յեղափոխութիւն բառն անգամ չի հասկնար, գրկուած էր Ամերիկայի Վերակազմեալներուն կողմէ իբրեւ ներկայացուցիչ, Լոնտոնի լիազօրները հաշտեցնելու, որոնք վերջապէս կ'ամբաստանէին ամէնացած կերպով և մեղադրագիրներ կուղղէին։ Պատուելին իբրեւ անփորձ վարդապետ կրակը և ջուրը հաշտեցնելէ յետոյ Լոնտոնի պատուիրակներուն մի քանի տարրերէ կազմուած միութիւնմը հետեւանքները միշտ ապետաւոր կըլլան, որոնք, ցաւալի է որ, վերջերս թնդանօթի ռումբերուն նման իրարու յաջորդելով կը պայթին ժողովրդին գլխին վրայ, զանի վերջնական կերպով ընկճելու, վհատեցնելու և ջախջախելու դիտումով, մանաւանդ այս վայրկեանին, երբ գերմարդկային ճիգեր կը թափուին ամբողջ աշխարհը յեղափոխութեան փրկաւէտ գաղափարին փարել տալու։ Միթէ ոճիր չէ՞ ասիկա ազգին դէմ մեր միութենական, անկեղծ (?) և ազգասէր(!) պարոններուն կողմէ։

Ցակաւին անցեալ օր մեր Սոֆիացիներուս գլխին ալ պայթեցաւ նմանօրինակ ռումբ մը, որ արեգակին չլացուցիչ բայց պայծառ ճառագայթներու նման ցոյց տուաւ տեղւոյս գաղութին գիտակից մասին թէ՝ Հնչակեան կուսակցութիւնը ինչ խղճալի վիճակի մէջ կը գտնուի և անկումի ո՞ր աստիճան տխուր շրջան մը բոլորելու վրայ է։

Բացատրեմ ըսածս.

Համբաւաւոր պատուելի Զիթճիեանը, որ իբրեւ թէ յեղափոխականի դեր կը խաղայ, բայց յեղափոխութիւն բառն անգամ չի հասկնար, գրկուած էր Ամերիկայի Վերակազմեալներուն կողմէ իբրեւ ներկայացուցիչ, Լոնտոնի լիազօրները հաշտեցնելու, որոնք վերջապէս կ'ամբաստանէին ամէնացած կերպով և մեղադրագիրներ կուղղէին։ Պատուելին իբրեւ անփորձ վարդապետ կրակը և ջուրը հաշտեցնելէ յետոյ Լոնտ-

---

Արդէն յիշեցի Ֆրանսական կառավարութեան օրինակը որ ինքը իր նախանձոտութեամբը արդէն պզտիկ քայլ մը առաւ հայերուն պաշտպանութեանը համար. ըսի թէ Ռուսիա քանիցս ներկայացած էր իբրեւ ազատարար Արեւելքի ժողովրդոց հաւատար եւ թէ ճշմարիտ թեթեւացումներ բերած էր անոնց՝ թէեւ անձուկ սահմաններու մէջ։

Հիմակ աւելի ժամէն դիտենք Գերմանիոյ պատմութիւնը, տեսնենք ինչ եղած է իր դերը միջազգային տնտեսկեցով։ Գերմանիոյ փառապանծ անցեալին վրայ շատ կը խօսուի. բայց ի՞նչ կը գտնանք այդ անցեալին մէջ եթէ մէկդի առնենք գեղարուեստի եւ գիտութեան գործերը։

Գերմանիա, մինչեւ դարու սկիզբէն իսկ, աշխարհակալներու երկիր մը եղաւ, բոլոր դրացի ազգերը ահաբեկեցան անկէց ու ատեցին զայն։ Ան է իր փառապանծ անցեալը։ Ասոր համար չեմ ուզեր քար նետել իրեն, ատիկա ժամանակ համաձայն էր ժամանակին քաղաքակրթութեանը. եթէ Գերմանիա աշխարհակալ չըլլար, ուրիշ ազգ մը պիտի ըլլար։ Սակայն սա է թէ Գերմանիա իբրեւ հարատարիչ մը նկատուեցաւ եւ ուրիշ ժողովուրդներէ քամահրուեցաւ։

Այս տեսութիւնը տանդութեան մը պէս փոխանցուեցաւ, ան դեռ իր բոլոր հետեւանքներովը գոյութիւն ունի դրացի ժողովրդոց մէջ ուր շատ վառ մնացած է. ասոր մէկ օրինակը կը գտնենք մեր ցեղին պատկանող ժողովուրդի մը, գերման Զուիցերիացիներուն մէջ։ Այդ հին ատելութիւնը կը ցոլանայ ժողովրդական բարբառին մէջ որ յաճախ այնքան արտայայտիչ է. Զուիցերիացին Գերմանիա՞ կերթայ մի, կըսէ. իմ կանկ նախ Տհօշլհնս ուսէ, այսինքն դուրս կերթամ. բայց երբ Ֆրանսա երթայ՝ կըսէ. իմ կանկ նախ Ֆրանֆրեյխ ինն. երկրիս մէջ կը մնամ։ Այս խարութիւնը պատմական հետեւանք մըն է նախկին յոյժ տարբեր յարաբերութեանց։

Աչխարհակալ ազգ եղած ըլլալու այս պարագան Գերմանիոյ համար ուրիշ հետեւանքներ ունեցաւ, իր առջի պատմութեան մէջ, նորազանդութեան ժամանակ և մանաւանդ 1848 ին։

Եթէ ուշի ուշով ուսումնասիրէք 1848ի գերման յեղափոխութիւնը, պիտի հաստատէք թէ իր դժբախտ ձախողուածին պատճառը մեծ մասամբ եղաւ այն հարկաւորութիւնը ուր կը գտնուէր Գերմանիա՝ իր ձեռքը իր արտաքին ստացուածքներուն վրայ պահելու. այս կացութիւնը թոյլ չը տուաւ գերմաններուն անկեղծօրէն ազատական դիրք մը ունենալ և գործել իբրեւ ճշմարտապէս ռամկավար ժողովուրդ։ Իտալական ու բոլոնական խնդիրները այդ պարագային մէջ՝ մանաւորապէս ջլատիչ ազդեցութիւն մը ունեցան. վճռողական բոպէներու մէջ՝ ազատութիւն բառը կը մնայնար ամէնէն ազատական գերմանացիներուն շրթներուն վրայ։ Մինչեւ նոյն պարագան ներկայացաւ 1859ին, երբ ժողովուրդը ոտքի ելաւ իր ազգային անկախութիւնը ձեռք բերելու համար։

Նոյնիսկ ծայրայեղ ձախակողմի կարգերուն մէջ այն ատեն կարծիքի անհամաձայնութիւններ տեղի ունեցան այն դրութեան մասին որուն Գերմանիա պարտաւոր էր հետեւիլ պատութեան այդ կռուին մէջ, նկատի առնելով այն ստացուածքները զոր ունէր երաչխաւորելու Իտալիոյ մէջ։ Ասիկա՝ բացատրելու համար թէ ինչո՞ւ գերման անունը այնքան քիչ սիրուած է օտար երկիրներու մէջ։ Ամէն անգամ որ Գերմանիա ուրիշ ժողովրդոց համակրանքն ուզած է, անոնք կրցած են իրեն պատասխանել կէօթէի ԲրուՀիրէին սա բառերով.

Ես պատուՀ մի բեզ։ Ինչո՞ւ Երբեմ մեղմեցիր հարուստահարեալներուն տառապանքը։ Երբեմ չորցուցիր արցունքը անոնց որ սնձկութեան մէջ են։

Ասիկա ճիշտ է գերման ժողովուրդին համար, նոյնիսկ մինչեւ մեր ժամանակը, և Քարլ Մարքս կրցած է գրել. «մենք, գերմաններս, ազատութեան ընկերացած ենք միմիայն անոր թաղման օրը։»

Երբեմ ազատութիւն չեմ բերած ոչ մէկ ժողովրդի։

Անգամ մը, 1866 ին, Պիզմարք վենտիկը առնել տուաւ Իտալիոյ որ արդէն ազատուած էր, բայց ասիկա Աւստրիան տկարացնելու համար էր. Ընդհանրապէս Գերմանիա միշտ վարանած է նպաստաւորելու ազատութեան շարժումներ օտար երկիրներու մէջ։

(Շարունակելի)

— ✠ —

տօն, եկաւ Պուլկարիա, ժողովներ գումարեց, կեղծութիւններ քարոզեց և կարելի է ըսել կասկածելի յաջողութիւն մը ձեռք բերաւ, բայց ահա անոր եռեւէն դարձեալ Ամերիկայէն շնչասպառ հասաւ հին հնչակեան մը. սակայն ի՞նչ դիտումով—մի՞թէ նախկինին խօսածը և կանգնածը աւելի հաստատ պահելու և ամրացնելու—ոչ, այլ ժողվելով իր շուրջը քամելիօնի պէս մի քանի գոյն փոխողներ, խօսուածը ջրելու և կանգնուածը անլիշատակելի կերպով ոչնչացնելու. մասնաճիւղի անդամներուն մէջ կուսակցական առելութիւններու սերմը ցանելով։ Եւ կիսէ՞ք ինչ միջոցներով Զիթճեանը, Արզուեանը և միւս բոլոր երեւելի վերակազմեալ վարիչները խաբեբայ. խաչագող, կեղծ կոչուէ յետոյ, անոնց ետեսին մատնիչի և դաւաճանի սև դիմակն ալ փակցնելով։

Թող տեսնէ ուրեմն հայ հասարակութիւնը, աչքերը չորս բանալով մեր անկեղծ (՞) միութենականներուն ուռած քայլը, թող ուշի ուշով զննէ պարոններուն ընտրած մարջոցը բարձր պահելու յեղափոխութեան մաքուր և վսեմ դրօշակը, թող տեսնէ անոնց ետքայրատեաց վարմունքը իրարու դէմ, և վերջապէս ըմբռնէ իրականութիւնը ու համոզուի թէ որոնք են իրեն ուղիղ ճամբան ցուցնող ճշմարիտ յեղափոխականները և անոնց փարի, այլուս չխաբուելով իր շուրջը լարուած աղետալի շառլաթանութիւններէն ու քարոզուած փայլուն բայց խաբուսիկ խոստումներէն, որոնք երկար ժամանակ իր գլուխը ուռեցուցին։

Գաղութիս չէզոք և քանիմաց մասն ալ ականատես ըլլալով վերոյիշեալ տրամա-քոմէտիին՝ ծափահարեց Դաշնակցութեան բռնաց զգուշաւոր ընթացքը միութենականներու ուռուցիկ հրաւէրներուն դէմ, որովհետեւ հասկնցան թէ, Հնչակեանները աւելի լայն ասպարէզ կուտան անձնական և կուսակցական ստոր կռիւներու և կարող չեն հետեւաբար մաքառելու մեր դարեւոր թշնամիին դէմ։

Արծիւ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ներկայիս կուգանք հրապարակաւ մեր խորին շնորհակալութիւնները յայտնելու տեղւոյս ԴՈՂԹԱՆ երգեցիկ խումբի յարգոյ անդամներուն, և ի մասնաւորի խումբին ղեկավար՝ տիար Նաթան պէյ Ամիրխանեանի, որ մասնակցելով կիրակնօրեայ հանդէսին անոր փայլն ու շքեղութիւնը աւելցուցին։

Ուսուցչական մարմին.

Պզգ. երկսեռ վարժարաններու

31 դեկտ. 1902

Վառնա

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

ԹՈՒՐՔ.— Այս քաղաքէն մեզի ուղղուած յանձնարարուած նամակ մը մօտ օրերս տեղւոյս փոստային մէջ կորսուած է։ Զը գիտենք թէ նամակը որմէն էր և ի՞նչ պարունակութեամբ, ուստի կը յայտարարենք որ նամակագիրը դիմէ փոստային վարչութեան։

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Մոսկուայի թերթերը կը հաւատան որ Ժահմարովի սպաննողը, որուն իսկութիւնը տակաւին չէ հաստատուած, հոկտեմբեր 26էն ի վեր Մոսկուայի մէջ կը ընակէր։ Նոր եկած ատեն անցագիր մը ցուցուցած էր—անշուշտ կեղծ—գերմանական հպատակ Միքայէլ Եաղոպով անունը կրող և տուն մը իջած էր, ուրիշ երիտասարդի մը հետ, իբր վարձուոր։ Իր ամբողջ գոյքը պայուսակ մը կը բաղկանար։ Ան մօտակայ ճաշարանը կերթար, ամէն օր, ուր սպասաւորներուն առատօրէն պարգեւներ կը բաշխէր, որով անոնք ալ պատուաւոր և բարի մարդ կը կարծէին զայն։ Եաղուպով սպանութեան օրը իր հաշիւները կը կարգադրէ ճաշարանին մէջ և մեկնեցաւ ըսելով թէ այդ օրը իսկ բարեկամի մը հետ Սէն Բեթերսպուրկ պիտի մեկնի, բայց եթէ երբէք պատահմամբ իր ընկերը ժամադրավայրը չի գար որոշուած ժամուն, այն ատեն, նոյն իրիկունն իսկ, կրկին պիտի դար այդ ճաշարանը։

— Հայոց տառերու գիտի 1500 ամեակի առթիւ ճեմարանի ուսուցիչ Մանուկ Արեղեանը շարք մը հնախօսական յօդուածներ կը պատրաստէ եղեր։

— Վարագայ Խաչի տօնին, ամառը եպիսկոպոսներու ձեռնադրութիւն պիտի տեղի ունենայ և միւռոն պիտի օրհնուի։

— Կիրակի օրը, տեղւոյս Ազգ. երկսեռ վարժարաններու անուան տարեդարձին առթիւ դպրոցական սիրուն հանդէս մը տեղի ունեցաւ Ս. Սարգիս եկեղեցիին մէջ, արարողութեանց աւարտումէն յետոյ, «Գողթան» երգեցիկ խումբը, առաջնորդութեամբ տիար Նաթան Ամիրխանեանի, քառաձայն երգեր երգեց բաւական յաջող կերպով. քանի մը աշակերտներ հայրենասիրական ոտանաւորներ արտասանեցին և վարժարանին ուսուցիչներէն պ. Հ. Փեշտմալճեան խօսեցաւ հայ իգական սեռի դաստիարակութեան մասին, իսկ պ. Ե. Սրմաքէշխանեան՝ հայ ընտանիքներու մէջ փոխանակ Թրքերէնի հայ լեզուն խօսելու հարկաւորութեան վրայ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Բարիզի Թրքական դեսպանը պաշտօնապէս հերքեր է Մակեդոնիոյ մէջ տեղի ունեցած կոտորածները։

— Գերմանական կարեւոր թերթ մը կը հաւատէ որ Սուլթանը յայտարարած է թէ «միայն պատերազմի փափագ ունեցողները և իմ գահընկէց ըլլալ ուզողները կրնան ինծի խորհուրդ տալ բարենորոգումներ մտցնելու քրիստոնեայ նահանգապետներ նշանակելով»։

Ու միայն պատերազմի դաշտին մէջ պարտուելով Սուլթանը կրնայ փոփոխութիւն մտցնել Թուրքիոյ վարչութեան մէջ։

— Անգլիա բողոքած ըլլալով Վոսֆորէն չորս ռուս թորփիլանաւերու իմաստոյ անցնելուն դէմ, պայմանով որ միւսներուն արտօնութիւնը իրենն ալ տրուի, Սուլթանը ետ առեր է այդ մասին Ռուսիոյ տուած արտօնութիւնը։ Բայց ռուս դեսպանը կը պնդէ եղեր այդ խոստումին գործադրութեանը վրայ։

ՊՈՒԼԿԱՐԻԱ—ՄԱԿԵԴՈՆԻԱ

Մակեդոնիայի զանազան կողմերէն հեռագիրներ կան ծանուցող թէ փոքրիկ կոտորածներ տեղի ունեցեր են։ Թուրք զօրքերը տեղ տեղ յարձակեր են Մակեդոնիայէն Պուլկարիա փախչող գիւղացիներուն վրայ։

— Եւրոպական թերթերը կը հաղորդեն որ ռուս և աւստրիական միացեալ նաւատորմիղ մը փետրուարին վերջերին Սելանիկի ջուրերը պիտի այցելէ։

Սոֆիա.— Նախարարապետ պ. Տանէֆ մտադիր է պուլկար քաղաքական կուսակցութեանց պետերէն և Մակեդոնացի գաղթականներէն ժողով մը գումարել և անոր ներկայացնել Մակեդոնիոյ մէջ բարենորոգումներ մտցնելու աւստրահուսական ծրագիրը, եթէ «ներքին կազմակերպութիւնը», ինչպէս կը կոչուի յեղափոխական քոմիթէն նոյն իսկ Մակեդոնիոյ մէջ, եռ կենայ յառաջիկայ գարնան ապստամբութիւն հանելու իր նպատակէն։ Մակեդոնացի գաղթականներու խմբակը մտադիր է ներկայ գտնուիլ սոյն գումարման ամբողջովին կամ մասամբ, աւելի բողոքելու համար Թուրքիոյ շընորհած բարենորոգումներուն դէմ քան ընդունելու Լամստորֆ-Կոլուխովսքի ապագայ ծրագիրը, որ ոչ է ինքնօրինութիւն մը տալ Մակեդոնիոյ՝ Թուրք պատամիտ կուսակալի մը իշխանութեան մը ներքեւ։

— Լամստորֆ կոմսին Վիէննա այցելելէն առաջ, Ռուսիոյ և Աւստրիոյ միջև երկու ծրագիր կայ եղեր Մակեդոնիոյ մասին. առաջին, իրան վիճակը անփոփոխ պահել հոն, բայց ստիպել Թուրքիան որ բարենորոգումներ ներմուծէ. երկրորդը, ինքնօրինութեան հաստատումը։ Պոլսոյ ռուս դեսպան պ. Զինովիէվ առաջինին կուսակից է եղեր, իսկ պ. Կոլուխովսքի երկրորդին։ Թէեւ տակաւին յայտնի չէ թէ ինչ ըսուած ու որոշուած է Վիէննա, բայց բոլոր նշանները ցոյց կուտան թէ պ. Զինովիէվի կարծիքը յաղթեր է։

ՍՊԱՆԻԱ

Սպանիոյ նախարարապետ պ. Սագասթա մեռեր է անակնկալ կերպով։ Երեւելի քաղաքագէտ մըն էր և երկար ատեն վարած նախարարապետութեան պաշտօնը։

ԹԱՏՐՈՆ

Վաղը, հինգշաբթի գիշեր, Պապաեան թատերախումբը Սանդրալի սրահին մէջ պիտի շարունակէ «Մոնթէ—Քրիսթօ կոմսին» ներկայացմանց շարքը, 7 արարուածով։

Ներկայացումը ինքնին այնքան շահեկան է որ աւելորդ է անոր մասին ոեւէ խօսք ընել հոս։

ԱԶԴ

Որբախնամը կաղանդի առթիւ հրապարակ հանած է, նուէրի և շնորհաւորութեան քարթեր որոնց վրայ Թրքահայ և ռուսահայ նշանաւոր հայ յեղափոխական հերոսներու, կաթողիկոսներու, պատրիարքներու, բարերարներու, բանաստեղծներու, գրական մշակներու, հասարակական գործիչներու, արուեստագէտներու, գիտուններու, զօրավարներու և պետական անձանց դէմքեր նկարուած են շատ նուրբ կերպով։

Կը ծախուի Տ. Զարպհանէլեանի քով սեռին (9 հատ) մէկ ֆրանքի, իսկ ուրիշ տեղերէ պէտք է ղրկեն 1 ֆրանք 15 սանթիմի փոստի փոխ։

Ի դիմաց Գործ. ժողովոյ

(ԿՆԻՔ)

24 դեկտ. 1902

Վառնա

Отговорникъ

Мурадъ Ераносянъ

Печатница „Взаимность» Варна